ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

N 17/18.1/5918-2024 «15» 02 2024թ.

«ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-Ի

ՏՆՕՐԵՆ Ս. ՄԿՐՏՉՅԱՆԻՆ

(ՀՎՀՀ 00465342, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ս. Դավիթի 13/27

էլ. հասցե՝ Elit.sv@mail.ru, հեռ. 099 690 600)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ կառավարությանը ենթակա Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար շենքերի մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով՝ Վարչապետի աշխատակազմի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 09.11.2023թ.-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն կնքվել է **«ՎԱ-ՍԱՏՄ-ԷԱՃԾՁԲ-24/09-1»** ծածկագրով ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի շրջանակում Կատարողի կողմից ներկայացվել են Պայմանագրի ու որակավորման ապահովումներ՝ տուժանքի ձևով:

Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, Պայմանագրի 7.15 կետի համաձայն՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ին ներկայացվել է համաձայնագիր կնքելու առաջարկ:

Պայամանագրի 7.15 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված

ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

«ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն տեղեկացվել է համաձայնագրի ուղարկվելու, գնման ընթացակարգի շրջանակներում իր իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, սակայն վերջինս չի ներկայացրել համաձայնագիրը և չի մատուցել պայմանագրով նախատեսված ծառայությունները: Ուստի, հիմք ընդունելով վերոհիշյալ հանգամանքը՝ աշխատակազմը միակողմանի հրաժարվում է Ընկերության հետ 09.11.2023թ. կնքված «ՎԱ-ՍԱՏՄ-ԷԱՃԾՁԲ-24/09-1» ծածկագրով պայմանագրից՝ համարելով այն ամբողջությամբ լուծված:

Միաժամանակ, Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Ընդ որում, «ՎԱ-ՍԱՏՄ-ԷԱՃԾՁԲ-24/09» ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.15 կետի համաձայն՝ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից բացված 900005000758 գանձապետական հաշվեհամարին փոխանցելու համար:

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն ծանուցմամբ պատվիրատուն ապահովել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված պահանջի կատարումը:

ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ

Կատարող՝
գործերի կառավարչություն 010 515-693